ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի
ավագանու 202 թ. -ի
թիվ Ա որոշումով

Տաշիր համայնքի ղեկավար՝

_____ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

« _» սեպտեմբերի 2026թ.

Կազմված է թ.
Բաղկացած է 10 թերթից
Տպագրված է 2 օրինակ
Օրինակ 1

Գրանցված է

ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից

Գրանցման ամսաթիվ _____

Գրանցման թիվ _____

ՀՎՀՀ_____

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՇԻՐԻ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ »
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզ
Ք. Տաշիր 20266թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի կանաչապատում» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքային տնտեսությունը սպասարկելու նպատակով:
Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքն է (այսուհետ՝ հիմնադիր), որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարը:
Կազմակերպությունն ստեղծվել է և կազմակերպության կանոնադրությունը (այսուհետ՝ կանոնադրություն) հաստատվել է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանո ւ դեկտեմբերի 28-ի N 36-Ա որոշմամբ:
2. Կազմակերպությունը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Տեղական ինքնակառավարման մասին», «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների մասին» (այսուհետ՝ օրենք) Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ օրենքների և իրավական ակտերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության (այսուհետ՝ կանոնադրություն) համաձայն:
3 Կազմակերպության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման պետական գրանցման) պահից:
4 Կազմակերպությունն ունի իր հայերեն անվանումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք, դրոշմակնիք և ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային և այլ նշաններ ու անհատականացնող այլ միջոցներ:
5 Կազմակերպությունը ձեռք է բերում և իրականացնում կանոնադրությամբ ամրագրված գործառույթներ, ստանձնում է անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:
6 Կազմակերպությունը իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
7 Հայաստանի Հանրապետությունը և համայնքը պատասխանատվություն չեն կրում Կազմակերպության պարտավորությունների համար: Կազմակերպությունն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքի պարտավորությունների համար:
8 Կազմակերպության անվանումն է՝
Հայերեն լրիվ Հայստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի կանաչապատում համայնքային ոչ առեվտրային կազմակերպություն, կրճատ՝ Հայստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի կանաչապատում ՀՈԱԿ:
Ռուսերեն լրիվ՝ «» муниципальная некоммерческая организация, կրճատ՝ ««»» МНКО
Անգլերեն լրիվ՝ municipal nonprofit organization, կրճատ՝ NPO

9 Կազմակերպության գտնվելու վայրը և փոստային հասցեն է՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

10 Կազմակերպության գործունեության նպատակն է Տաշիր համայնքի վարչական տարածքում կանաչապատում , կանաչ տարածքների պահպանություն, խնամք, մաքրում, ոռոգում , քաղաքային լադշաֆտների պլանավորում, կանաչ գոտիների քարտեզագրում:

11 Կազմակերպության գործունեության առարկան է՝

1) կանաչ տարածքների՝ համայնքի կանաչ պաշտպանիչ գոտու, այգիների, պուրակների, սիզամարգերի,ծաղկանոցների և այլնի սպասարկում և վերանորոգում
2) նոր կանաչ տարածքների հիմնում
3) ծառերի սեզոնային էտում
4) Տաշիր համայնքի կանաչ տարածքների ընդարձակում,
5) Տաշիր համայնքի կանաչ տարածքների խնամք , ոռոգում մաքրում,
6) Տաշիր համայնքի կանաչ տարածքների քարտեզագրում,
7) ոլորտում մասնագիտացված միջազգային և տեղական կազմակերպությունների, հասարական կազմակերպությունների, գիտական ինստիտուտների, լանդշաֆտային պլանավորման տարաբնույթ ծրագրերի իրականացում
8) ոլորտի վերաբերյալ տեղեկատվաքարոզչական աշխատանքների իրականցում
9) Տաշիր համայնքի տարածքում կանաչապատման վերաբերող այլ գործառույթների իրականացում իրականցում

16. Հիմնադրի որոշմամբ՝ կազմակերպությունն իրականացնում է կանոնադրության 2 կետում նշված նպատակների իրականացման համար անհրաժեշտ և օրենսդրությանը չհակասող այլ գործունեություն:

15. Պայմանագրային հիմունքներով ներգրավում է այլ կազմակերպությունների կամ անհատների

16.Կազմակերպությունը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ՝ կանոնադրությամբ սահմանված գործունեության տեսակներով՝ հիմնադրի որոշմամբ և օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ՝ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17.Պետական գրանցման պահից կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

18.Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտականությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել և իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

19.Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և (կամ) օտարերկրյա բանկերում՝ հաշվարկային հաշիվներ

20.Կազմակերպությունը կարող է լինել այլ կազմակերպության հիմնադիր (մասնակից) միայն

հիմնադրի որոշմամբ:
21. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և իր կանոնադրությանը համապատասխան Կազմակերպությունն իրավունք ունի ստեղծել հիմնարկներ, մասնաճյուղեր, ներկայացուցչություններ: ՀՈԱԿ –ի հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչություններն ստեղծվում են հիմնադրի որոշմամբ ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքներում: Օտարերկրյա պետությունում առանձնացված ստորաբաժանումների ստեղծումն իրականացվում է տվյալ երկրի օրենքներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:
22.Կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները իրավաբանական անձինք չեն և գործում են կազմակերպության հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Կազմակերպության լիազորագրերի հիման վրա:
23.Կազմակերպությունն իրավունք ունի.
1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել և տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,
2) հիմնադրի որոշումների կամ սույն կանոնադրության համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, մեկ տարուց ոչ ավելի ժամկետով՝ իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնել վարձակալության,
3) օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:
24.Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:
25.Կազմակերպությունը պարտավոր է.
1)օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում ու ներկայացնել վիճակագրական հաշվետվություն,
2) աշխատանքային պայմանագրեր կնքել Կազմակերպության աշխատակիցների հետ,
3) պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,
4) օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Կազմակերպության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները, հրապարակել տարեկան ֆինանսական հաշվետվությունը,
5) ապահովել Կազմակերպության փաստաթղթերի(Կազմակերպության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Կազմակերպության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, տնօրենների հրամանների, հրահանգների ու կարգադրությունների, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը:

6) կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ

26.Կազմակերպության հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

27.Կազմակերպության հիմնադիրն իրավունք ունի՝

1) հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը(այդ թվում՝ գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները),

2) կասեցնել կամ ուժը կորցրած ճանաչել Կազմակերպության տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

3) վերահսկողություն իրականացնել Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման և պահպանման նկատմամբ,

4) հայցով դիմել դատարան՝ օրենքի կամ սույն կանոնադրության պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքն անվավեր ճանաչելու նպատակով, օգտվել օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

28.Կազմակերպության հիմնադիրը պարտավոր է՝

1) ապահովել Կազմակերպության բնականոն գործունեությունը,

2) չհրապարակել Կազմակերպության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ,

3) կատարել Կազմակերպության նկատմամբ ստանձնած պարտավորությունները,

4) պահպանել սույն կանոնադրության դրույթները:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՆ ՈՒ ՇԱՀՈՒՅԹԸ

29.Կազմակերպության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց:

Կազմակերպության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարեցնելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված գույքը կազմակերպության սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն դրամով:

30.Կազմակերպության հիմնադիրը Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ:

31.Կազմակերպության հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման

Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ Կազմակերպության կանոնադրությամբ: Կազմակերպությանն ամրացված գույքը վարձակալության է հանձնվում հիմնադրի կողմից հաստատած կարգով: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ամբողջությամբ ուղղվում են համայնքի բյուջե:

Վարձակալության չհանձնված ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են, եթե այլ բան նախատեսված չէ Կազմակերպության կանոնադրությամբ:

Պետական կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

32.Կազմակերպության գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով;

33.Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

7.

34.Կազմակերպության կառավարման մարմիններն են Կազմակերպության հիմնադիրը և տնօրենը:

35.Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը Կազմակերպության հիմնադիրն է, որն իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը և որն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

36.Կազմակերպության հիմնադիրը ապահովում է Կազմակերպության բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում սույն կանոնադրությամբ սահմանված գործունեության չկատարման կամ անպատշաճ կատարման համար:

37.Կազմակերպության հիմնադրի իրավասությանն են պատկանում՝

1) Կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

2) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմի հաստատումը,

3) Կազմակերպությանն ամրացվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կազմի
հաստատումը,

4) Կազմակերպության վերակազմակերպումը,

5) Կազմակերպության լուծարումը,

6) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռների հաստատումը,

7) Կազմակերպությունների հիմնադրումը,

8)Կազմակերպություններում մասնակցության մասին որոշումների ընդունումը,

9) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը, տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաամկետ դադարեցումը,

10) Կազմակերպության գործունեության վերահսկողության իրականացումը,

11) Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝

Կազմակերպության կողմից իրականացվող գործունեության տեսակների և ծրագրերի սահմանումը,

12) Կազմակերպության աուդիտ իրականացնող անձի հաստատումը,

13) աուդիտի իրականացման մասին որոշում ընդունելը,

14) Կազմակերպության տարեկան ծախսերի, այդ թվում՝ արտաբյուջետային եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատումը,

15) Կազմակերպության տարեկան հաշվետվությունների, տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատումը,

15) Կազմակերպության շահույթի և վնասների օգտագործնան կարգի մասին որոշման ընդունումը,

17) Կազմակերպության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքներ կատարելուն համաձայնություն տալը,

18) Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, կանոնադրությունների հաստատումը,

19) Կազմակերպության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի հաստատումը,

20) Կազմակերպության ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը:

Կազմակերպության հիմնադիրն իրավունք ունի որոշումներ ընդունել նաև օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված ցանկացած այլ հարցի շուրջ:

38.Կազմակերպության ընթացիկ, արտադրատնտեսական, ֆինանսական և այլ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին նշանակում և ազատում է հիմնադիրը:

Տնօրեն կարող է նշանակվել բարձրագույն կրթություն ունեցող, Հայաստանի Հանրապետության գործունակ ցանկացած քաղաքացի, որն ունի հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակվում են մրցույթով:

Մինչև գործադիր մարմնի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելը և անցկացնելը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը թափուր պաշտոնում ժամանակավոր պաշտոնակատար է նշանակում

Եթե գործադիր մարմնի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթը համարվում է չկայացած, ապա ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձի որոշմամբ՝ մինչև վեց ամիս ժամկետով:

Կազմակերպության տնօրենի միջև աշխատանքային պայմանագիրը հիմնադրի անունից ստորագրվում է համայնքի ղեկավարի կողմից: Պայմանագրում սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, փոխհարաբերությունները հիմնադրի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման հիմքերը այդ թվում՝ «օրենքով սահմանված բոլոր հիմքերը», այլ դրույթներ, որոնք կողմերը կգտնեն անհրաժեշտ:

Տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի կազմակերպության հիմնադրի իրավասությանը վերաբերող հարցերի: Տնօրենը օրենքով, հիմնադրի որոշումներով, աշխատանքային

պայմանագրով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ղեկավարում է
Կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության, աշխատանքային պայմանագրի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:
Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը Հիմնադրին, պետությանը պատճառված վնասի համար, ընդ որում՝ տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:
Հիմնադրի անունից հանդես եկող պաշտոնատար անձը(Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքի ղեկավարը) պարտավոր է օրենքով սահմանված կարգով լուծել վերը նշված վնասի փոխհատուցման հարցը, հակառակ դեպքում՝ նա կրում է լրիվ գույքային պատասխանատվություն:
Տնօրենի բացակայության դեպքում՝ հիմնադրի գրավոր որոշման համաձայն՝ տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:
39.Կազմակերպության տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Կազմակերպության:
40.Կազմակերպության տնօրենը իր իրավասության սահմաններում՝
1) առանց լիազորագրի գործում է Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը պետության, նրա մարմինների, այլ կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում,
2) տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
3) կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
4) կազմակերպում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանք՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը,
5) տալիս է լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով,
6) բանկում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ.
7) սահմանում է Կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,
8) հաստատում է Կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները, նշանակում և ազատում է դրանց ղեկավարներին, տալիս է համապատասխան լիազորագրեր,
9) արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ,և վերահսկում դրանց կատարումը,
10) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,
11) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին,
12) աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
13) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված կամ հիմնադրի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարականներ:
41.Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են

հիմնադրի կողմից լիազորված անձը, օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

Կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար հիմնադիրն իրավունք ունի ամեն տարի ներգրավել Կազմակերպության, նրա տնօրենի, գույքային շահերով չկապված արհեստավարժ վերստուգիչ աուդիտորի(արտաքին աուդիտ):

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

42.Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս Կազմակերպությունը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

43. Կազմակերպությունը՝ նրա հիմնադրի որոշմամբ, կարող է Օվերակազմակերպվել կամ լուծարվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել միայն օրենքով սահմանված կարգով և դեպքերում: Եթե լուծարվող Կազմակերպության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվոլ միայն սնանկության հետևանքով:

44. Կազմակերպության լուծարման դեպքում Կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքային բյուջե

45.Կազմակերպությունը համարվում է լուծարված իսկ նրա գործունեությունը՝ դադարած՝ այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու պահից: